ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 85/9-Լ «08» 05 2026թ.

2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) ընդունելության կարգի» 17-րդ կետը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. 2026/2027 ուսումնական տարում ԵՊՀ «Իրավագիտություն» մասնագիտության առկա և հեռակա ուսուցման ձևերով մագիստրատուրայի ընդունելության համար հավելյալ պարտադիր պահանջ սահմանել դիմորդի՝ «Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրի բազային կրթության առկայությունը:
2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ուսումնական ստորաբաժանումներին:

Ռեկտոր՝ Հ. Հովհաննիսյան